DEPARTMENT OF STUDENT SERVICES
1900 WEST OLIVE AVENUE • BURBANK • CALIFORNIA • 91506
TELEPHONE (818) 729-4467, (818) 729-4502 • FAX (818) 729-4576

ԲԴՄՇ-ի հարգելի ծնողներ և ընտանիքներ,

Մենք անհամբերությամբ ենք սպասում, որ երեխաները վերադառնան դպրոց: Մեր ընտանիքներին և աշխատակիցներին առողջ և անվտանգ պահելու համար, մենք պետք է շարունակենք աշխատել միասին և հետևել հանրային առողջապահության հրահանգներին:

Կալիֆոռնիայի հանրային առողջապահության (CDPH) և Վարակի ղեկավարման կենտրոնի (CDC) համաձայն, ամեն օր, ծնողները/պահապանները պետք է ստուգեն երեխայի /երեխաների ախտանշանները դպրոց ուղարկելուց առաջ:

Ստուգումներն ընդգրկում են.

Երեխայի ջերմության չափում: Խնդրում ենք երեխաներին դպրոց չուղարկել, եթե ջերմություն ունենան: 100.4 F աստիճան կամ դրանից բարձրը համարվում է ջերմությունունը:

Համոզվել, որ երեխան իրեն լավ է զգում և դպրոց չուղարկել նրան, եթե ունի հետևյալ ախտանշանները. լուծ կամ փսխում են, հազ, շնչահեղձություն, մկանների/մարմնի ցավեր, համի և հոտի նոր կորուստ: Նույնիսկ, եթե երեխայի ախտանշանները թույլ են նրան պետք է պահել տանը և դիմել բժշկին:

Եթե ձեր երեխան դպրոցում գտնված ժամանակ ախտանշաններ ունենա, ապա մենք կդիմենք ձեզ, որպեսզի նրան տուն տանեք: Խնդրում ենք համոզվել, որ արտակարգ իրավիճակի ընթացքում ձեր երեխաներին տուն տանող անձանց հեռախոսի համարները ճիշտ են, եթե դուք չկարողանաք տուն տանել երեխային: Խնդրում ենք համոզվել, որ դպրոցից ստացված զանգերը արգելափակված չեն:

Եթե ձեր երեխան շփվել է հիվանդի հետ կամ Covid-19-ի քննության դրական արդյունք է ստացել, խնդրում ենք դիմել նրա բժշկին: Տեղեկացրեք նաև նրա դպրոցին և պահեք երեխային տանը: Դպրոցի բուժքույրը կապ կհաստատի ձեզ հետ:

Երեխաներն ավելի լավ են սովորում, երբ առողջ են և իրենց լավ են զգում: Խնդրում ենք աջակցել ձեր երեխայի և Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջանի համայնքի առողջությանը:

Լենորա Ագիլերա

Դպրոցի գլխավոր բուժքույր